ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 23-ին մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը մեծագույն հանդիսավորությամբ նշվեց համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Դեռևս առավոտյան Մայր Աթոռի և ՀԲԸՄ-ի Հայորդյաց տների հարյուրավոր աշակերտներ քայլերթով Սուրբ Հռիփսիմեի վանքից շարժվեցին դեպի Մայր Տաճար: Թմբուկների ձայների ներքո խանդավառ մանուկները քաղաքի բնակիչների հետ եկան Ս. Տրդատի կամարի առջև՝ դիմավորելու Հայրապետական շքեղ թափորը:

Ժամը 10.30-ին Մայր Աթոռում սկսեցին ղողանջել Մայր Տաճարի զանգերը՝ ավետելով Տիրոջ Սուրբ Հարության ավետիսը: Մայր Աթոռի միաբաններից կազմված թափորը Ամենայն Հայոց Հայրապետի նստավայրից ամպհովանիով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջնորդեց դեպի Սուրբ Տաճար, ուր Հայոց Հայրապետը Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով մատուցեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Նորին Սրբությանը որպես առընթերականներ սպասավորում էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու, Հրատարակչական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը և Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

Սուրբ Պատարագի ընթացքին Նորին Սրբությունը իր պատգամը հղեց համայն հայ ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ և ի սփյուռս աշխարհի՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ավետիսով ամենքին ուղղելով Հայրապետական իր հորդորներն ու բարեմաղթանքները Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով:

Սուրբ Պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ նորընտիր նախագահ, ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, ՀՀ կառավարության անդամներ, ԱԺ պատգամավորներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության, կրթության, արվեստի և մշակույթի գործիչներ:

Սուրբ Պատարագի ավարտին Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, իսկ Ս. Տրդատի բաց խորանի առջևի հարթակում համերգային ծրագրով հանդես եկան Մայր Աթոռի և ՀԲԸՄ-ի Հայորդյաց տների սաները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ ԽԱՉԻ ԹԱՓՈՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ

ՀԱՅՈՐԴՅԱՅ ՏՆԵՐԻ ՍԱՆԵՐԻ ԵՐԹԸ ԴԵՊ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՈՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԱՓՈՐԸ

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ